ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ

ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ

Հյուսիսային Կովկասի հայկական նկաաելի դաղթօջախներից է եղել նաև Ստավրոպոլ քաղաքը: Ս. Ջալալյանն իր «Ճանապարհորդութեան» մեջ նշում է, որ XIX-րդ դարի 50-ական թվականներին այստեղ ապրում էին բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնք դդալի դեր էին կաարում հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում [1]: Հայոց քարաշեն դմբեթակիր եկեղեցին կառուցել են Նոր Նախիջևանից Սաավրոպոլ տեղափոխված 70 հայ վաճառականները: Հայ մանուկների կրթության և դաստիարակության գործում մեծ դեր է կաարել Սլաջալյանցի հիմնադրած դպրոցը: Մեծահարուստ Գաբրիել Թամամշյանցը քաղաքն ապահովել է խմելու ջրով:

Մեր շրջադայության ժամանակ պատմական արժեք ներկայացնող հին հայկական հուշարձաններ այլևս գոյություն չունեին:

ԳԵՈՐԳԻԵՎՍԿ

Գեորգիեսկում ապրող հայերն ունեցել են իրենց կրթական օջախը, եկեղեցին, սակայն այսօր դրանք չեն պահպանվել:

ՊՅԱՏԻԳՈՐՍԿ

Առողջարանային այս քաղաքում նույնպես կարեոր հայկական հուշարձաններ չեն մնացել: Մաշուկ սարի լանջին դանվող դերեզմանոցում՝ Մ. Յու. Լերմոնտովի մենամարտելու վայրից քիչ հեռու, նկատեցինք սև մարմարից կերտված մի ատպանաքար, որի վրա ելնդավոր տառերով կար ռուսերեն 9 տող.

580. АЛЕКСАНДР НИКОЛАЕВИЧ/ ВАРТАНОВ/. РОД. 1917 Г., УМ. $\frac{25}{6}$ 1932./ НЕ ПОЗНАВ В 15 ЛЕТ/ ДНЕЙ РАДОСТНЫХ ДЕТСТВА/, ОСТАВИВ В СКОРВИ ОТЦА, / МАТЬ,/ СЕСТЕР,/ НАШЕЛ ТЫ ВЕЧНЫЙ ПОКОЙ/ ЗДЕСЬ У ПОДОШВЫ МАШУКА.

Լուսանկ. 150

ՆՈՐ ԵԴԵՍԻԱ (ՆԱԽԿԻՆ՝ ՂՈՐԱ, ՂՈՐԱՅԻ)

Այս ընդարձակ բնակավայրը դանվում է Սաավրոպոլի երկրամասի Կուրսկայա կոչվող շրջկենտրոնից վեց կիլոմետր հեռավորությամբ՝ դեպի Մոդդոկ դնացող մայրուղու վրա: Նոր Եդեսիայում այժմ ապրում են ավելի քան 7000 հայեր, որոնք, չնչին բացառությամբ, մոռացել և մոռանում են մայրենի լեզուն՝ հայերենը: Նրանք խոսում են ռուսերեն, իսկ տանը՝ պարսկերենի ենթաբարբառով: Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի կարծիքով, այսաեղի բնակիչները, իբրև թե՝ «ճոդը եկամուա ցեղեր են, որոնք 18-րդ դարում ռուսաց Զուբով ղորավարի հետ տեղափոխվել են հիշյալ վայրերը»[2]: Իրոք որ Նոր Եդեսիայի աղդարնակչու-

---

1 Ս. Ջալալյան, Բ, էջ 453:

2 Մ. Բարխուդարեան, Պատմութիւն Աղուանից աշխարհի, մասն Ա, Թիֆլիս,1893 էջ 26:

թյունը զանգվածորեն դաղթել է Դերբենտից 1786 թվականին, սակայն այդ չի նշանակում, թե նրանք հայեր չեն եղել: Մինչև օրս այստեղ ապրող բնակիչներն անխիր (խոսքը վերաբերում է տեղաբնիկներին) իրենց համարում են հայեր և ունեն հայկական անուն-ազգանուններ: Նոր Եդեսիան հայոց ուխտադնացության վայրերից էր: Այս գյուղի Ս. Կարապետ եկեղեցում էին Վարդավառի տոներն անցկացնում մոզդոկահայերը:

1850-ական թթ. Նոր Եդեսիան ունեցել է 300 տուն հայ ընտանիք, որոնց հիմնական զբաղմունքը եղել են երկրագործությունն ու անասնապահությունը:

Ուսումնասիրողներից Ս. Ջալալյանը, այցելելով Նոր Եդեսիա, հուզմունքով արձանագրել է. «Զիք ուսումնարան աստ և չդիտեն խօսիլ հայերէն, սովորական բարբառ նոցա է պտրսկերէն, զոր ուսեալ են ի Դարբանդ»: Հետագայում այստեղ բացվում է հայկական դպրոց, որը գոյատևում է ընդհուպ մինչև XX-րդ դարի 60-ական թվականները:

Հայկական մոնումենտալ հուշարձաններից Նոր Եդեսիայում պահպանվել է Ս. Կարապետ եկեղեցին՝ հետագույն շրջանի կից կառույցով: Մեր այցի ժամանակ այն վերածվել էր գյուղական ակումբի:

Գյուղի գերեզմանոցը XIX-XX -րդ դարերից է: Կրաքարով պատրաստված շատ տապանաքարեր երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այրվել և օգտագործվել են իբրև կիր: Գերեզմանոցն աչքի է ընկնում գերդաստանային տապանաներով: Մինչև XX-րդ դարի առաջին տասնամյակների անխիր բոլոր տապանագրերը փորագրված են հայերեն: Այս պարագան ուղղակիորեն վկայում է, որ Նոր Եդեսիայի բնակիչները եղել և մնում են հայեր և ոչ թե «ճիղբ» կոչված ցեղեր:

Նոր Եդեսիայի տարածքից պրակում ղետեղել ենք 58 արձանագրություն, որոնք թեև ժամանակագրական առումով նոր են, սակայն կարևոր արժեք են ներկայացնում Հյուսիսային Կովկասի հայ դաղթավայրերի ղտամության համար: 1920-ական թվականներից հետո եղած տապանագրերն արդեն ռուսերեն են, հայոց ազգանուններին հաճախ ավելացվում են «ով» կամ «և» վերջավորությունները:

ՆՈՐ ԵԴԵՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

581. Տապանաքար՝ եղերին շուրջանակի.



ԱՅՍ ՏԱՊԱՆ ԵԴԵՍԻԱԲՆԱԿ ՑՈՎՀԱՆՆԵՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑԻ. ԾՆՈՒԵԼ Է 1863 Թ. ՑԼՈՒՆԻՍԻ 4-Ն. ՎԱԽՃ. 1903 Թ. ՑԼՈՒՆԻՍԻ 14:

Արևմտյան կողին՝ 10 տող.

ՀԱՅՈՒ/ԹՇԱՆ/ ՍԻՐՈՎ/ ՎԱՐՈՒԱԾ/ ԹՇՆԱՄԻ ԱՒԱԶԱԿ ՕՍԻ ՀՐԱՑ/ԱՆԻ ԳՆԴ/ԱԿԻՑ ՍՊ/ԱՆՈՒԵՑ ՔԱՋԱՍԻ/ՐՏ ՑՈՎ/ՀԱՆՆԷՍՆ:

Լուսանկ. 151